ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2019թ. թիվ 637-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի «ՆԱՐԵԿ» ՄԱՍՆԱՇԵՆՔԸ «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1425-Ն որոշման 1-ին կետի 2)-րդ ենթակետի «ե» պարբերության պահանջների՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության Վանաձոր քաղաքի Բանակի փողոցի N 8 հասցեում տեղակայված «Նարեկ» մասնաշենքը՝ 2229.11 քառ. մետր մակերեսով տարածքով, արտահիվանդանոցային ծառայություններ մատուցելու համար նախատեսված քաղաքաշինական և սանիտարահամաճարակային նորմերին համապատասխան վերանորոգում իրականացնելուց հետո, նվիրատվությամբ հանձնել «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությանը: Ազատել և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնել Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի N 17 հասցեում գտնվող «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության՝ 2134.01 քառ. մետր մակերեսով տարածքով մասնաշենքը՝ 0,2935 հեկտար հողատարածքով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցան վկայական N 1982553): Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխությունը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ